ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2019 թվականի սեպտեմբերի 11-ի N 9-Լ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-ն որոշմամբ հաստատված «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 48-րդ կետի 14-րդ ենթակետով և քննարկելով պրոռեկտոր Արմեն Թամազյանի հաղորդումը 2019 թվականի մարտի 1-ի N 11-Լ որոշմամբ հաստատված Համալսարանի հենակետային վարժարանում (ավագ դպրոցում) վճարովի հիմունքներով լրացուցիչ ծառայությունների իրականացման ծրագրում փոփոխություն կատարելու մասին՝

Գիտական խորհուրդը որոշում է.

2019 թվականի մարտի 1-ի N 11-Լ որոշմամբ հաստատված «Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ հենակետային վարժարանում (ավագ դպրոցում) վճարովի հիմունքներով լրացուցիչ կրթական ծառայությունների իրականացման ծրագրի» 9-րդ կետով ներկայացված ՆԱԽԱՀԱՇՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ շարադրել հետևյալ խմբագրությամբ.

ՆԱԽԱՀԱՇՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. Վճարովի լրացուցիչ կրթական ծառայությունների իրականացումից ստացված եկամուտներից գոյացած բյուջեի ծախսերի ուղղությունները բերված են ստորև աղյուսակում.

Հոդվածի անվանումը	**Եկամտի բաշխման համամասնությունները /տոկոս/**
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ (ներառյալ հարկերը և պարտադիր այլ վճարները)	70
Այլ ծախսեր (գույքի ձեռքբերում, գրասենյակային այլ ծախսեր)	10
Շահույթ	20
Ընդամենը	**100**

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ